Անկախ աուդիտորական եզրակացություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021թ.

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲ "Four A Consulting"" CJSC
audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան50/136 , ք.Երևան,ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Սոֆթ Կոնստրակտ" ՓԲԸ -ի բաժնետերերին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Սոֆթ Կոնստրակտ" ՓԲԸ -ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2021թ. ապրիլի 28-ին եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

28 ապրիլի 2022թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ Է ԽՈՒՍԼԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	**2021թ.**	**2020թ.**
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,464,150	479,372
Ոչ նյութական ակտիվներ	5	111,424	16,964
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	6	1,038,003	325,058
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	27,224	-
Հետաձգված հարկային ակտիվներ	7	262,014	147,827
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,902,815**	**969,221**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	197,305	79,311
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	6,837,355	5,582,327
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	739,786	284,640
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**7,774,446**	**5,946,278**
Ընդամենը ակտիվներ		**10,677,261**	**6,915,499**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	11	290,119	1,000
Կուտակված շահույթ		2,760,766	2,973,221
Ընդամենը սեփական կապիտալ		**3,050,885**	**2,974,221**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ		-	40,000
Վարձակալության գծով ոչ ընթացիկ պարտավորություններ	12	635,902	234,080
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**635,902**	**274,080**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	5,259,901	3,257,555
Վարձակալության գծով ընթացիկ պարտավորություններ	12	525,397	104,700
Ածանցյալ պարտավորություններ		17,817	16,088
Շահութահարկի գծով պարտավորություն		1,187,359	288,855
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**6,990,474**	**3,667,198**
Ընդամենը սեփական կապիտալի պարտավորություններ		**10,677,261**	**6,915,499**

Տնօրեն՝
Հարություն Համբարձումյան
28.04.2022թ.

Գլխավոր Հաշվապահ՝
Արթուր Գալոյան

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2021թ.	2020թ.
Ծրագրային ապահովման մշակման պայմանագրերից հասույթ	14	12,963,080	9,218,891
Խաղային եկամուտներ	15	31,183,760	4,714,732
Այլ եկամուտ		41,312	114,608
Համախառն շահույթ		**44,188,152**	**14,048,231**
Փոխհատուցում աշխատակիցներին		(24,429,223)	(9,345,273)
Միջնորդավճարներ		(5,052,111)	(664,128)
Մարքետինգի և գովազդի ծախսեր		(3,063,923)	(401,048)
Մաշվածություն և ամորտիզացիա		(808,093)	(405,143)
Արտոնագրային վճարներ		(1,200,000)	(220,028)
Այլ ծախսեր	16	(2,305,813)	(363,903)
Գործառնական գործունեությունից շահույթ		**7,328,989**	**2,648,708**
Ֆինանսական ծախս, զուտ	17	(149,990)	(5,531)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից (վնաս) օգուտ, զուտ		(309,100)	141,738
Շահույթ մինչև հարկումը		**6,869,899**	**2,784,915**
Շահութահարկի գծով ծախս	18	(1,299,971)	(268,933)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո		**5,569,928**	**2,515,982**
Այլ համապարփակ եկամուտ			
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**5,569,928**	**2,515,982**

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	1,000	457,239	458,239
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Տարվա զուտ շահույթ	-	2,515,982	2,515,982
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	2,515,982	2,515,982
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ բաժնետերերի հետ			
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	1,000	2,973,221	2,974,221
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	1,000	2,973,221	2,974,221
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Տարվա զուտ շահույթ	-	5,569,928	5,569,928
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	5,569,928	5,569,928
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ բաժնետերերի հետ			
Բաժնետիրական կապիտալի համալրում	289,119	-	289,119
Հայտարարված շահաբաժիններ	-	(5,782,383)	(5,782,383)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	289,119	(5,782,383)	(5,493,264)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	290,119	2,760,766	3,050,885

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից մուտքեր	13,155,249	8,547,562
Խաղային եկամուտներից զուտ մուտքեր	47,443,974	5,985,091
Դեպոզիտներից ելքեր	(15,225,139)	(1,786,114)
Աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումներ	(23,240,924)	(8,337,699)
Վճարված հարկեր և տուրքեր	(102,122)	(47,109)
Վճարված արտոնագրային վճարներ	(1,200,000)	(1,200,000)
Վճարումներ մատակարարներին	(6,566,238)	(1,476,925)
Վճարված միջնորդավճարներ	(1,297,393)	(528,776)
Այլ վճարներ, զուտ	(4,440,931)	(91,745)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**8,526,476**	**1,064,285**
Վճարված շահութահարկ	(516,092)	(111,944)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**8,010,384**	**952,341**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,596,396)	(614,532)
Փոխառությունների տրամադրում	(300,000)	(400,000)
Տրամադրված փոխառությունների մարում	300,000	400,000
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(1,596,396)**	**(614,532)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	1,800,000	2,780,000
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	(1,840,000)	(2,820,000)
Շահաբաժինների վճարում	(5,493,264)	-
Կանոնադրական կապիտալի համալրում	289,119	-
Վարձակալության պարտավորության մարում	(599,679)	(41,931)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(5,843,824)**	**(81,931)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների զուտ աճ	**570,164**	**255,878**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(115,018)	694
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	284,640	28,068
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**739,786**	**284,640**

1-27 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սոֆթ Կոնստրակտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2014թ. հուլիսի 22-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ 286.110.821383 գրանցման համարով:
Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են

- համակարգչային ծրագրերի մշակում և տեխնիկական սպասարկում,
- խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ կապված համակարգչային ծրագրերի հետ,
- տվյալների մշակման, ծրագրային ապահովման իրականացման և տեղեկատվության հաղորդման ծառայությունների մատուցում,
- ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում,
- վիճակախաղերի կազմակերպում:

2020թ. հոկտեմբերի 1-ին Ընկերությունը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացել է ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման #ԻՇԽ-007 և 2020թ. Նոյեմբերի 19-ին՝ վիճակախաղերի կազմակերպման #ՎԽ-026 լիցենզիաները: Մինչ Ընկերության կողմից լիցենզիաների ձեռքբերումը տվյալ ծառայությունները մատուցում էին Ընկերությանը կապակցված՝ միևնույն վերահսկողության տակ գտնվող այլ ընկերություններ՝ նույն բրենդի և հարթակի միջոցով: Վերը նշված ամսաթվերին կապակցված ընկերությունների և Ընկերության միջը կնքվեցին «Իրավունքների փոխանցման պայմանագրեր»՝ համաձայն որոնց Ընկերությանն էին փոխանցվում օգտատերերի դրական մնացորդները, կատարած և չավարտված խաղադրույքները և կապակցված այլ իրավունքներն ու պարտականությունները:
Այսպիսով, Ընկերությունը դարձավ Հայաստանում առաջատար բուքմեյքերական ընկերություններից մեկը և առաջարկում է առցանց խաղային արտադրանքի լայն ընտրանի: Հաճախորդների համար այդ ծառայությունները հասանելի են www.vivarobet.am կայքի միջոցով, որը ղեկավարվում է Ընկերության կողմից: Կայքն ամեն ամիս տրամադրում է 60,000-ից ավել լայվ խաղ, առաջարկում մանրամասն անիմացիոն տվյալներով խաղերի հեռարձակումներ՝ լայվ հաշիվներով և խաղերին վերաբերող այլ տվյալներով:
Ի լրումն առցանց ծառայությունների Ընկերությունը հնարավորություն է տալիս հաճախորդներին կատարել խաղադրույքներ իր գրասենյակներում՝ բեթշոփերում: Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում գործում են շուրջ 19 բեթշոփեր:
2020թ. դեկտեմբերի 30-ին կայացած Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 001-301220 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը որոշում է կայացրել վերակազմավորվել որպես փակ բաժնետիրական ընկերություն: Գրանցումը հաստատվել է 2021թ. մարտի 12-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: «Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Սոֆթ Կոնստրակտ» ՍՊԸ-ի իրավահաջորդը:
Ընկերության սեփականատերերն են Վահե Բաղալյանը և Վիգեն Բաղալյանը՝ յուրաքանչյուրը 50% բաժնեչափով:
Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3,842 մարդ (2020թ.՝ 3,104 մարդ):
Ընկերության գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան 20:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար (նախքան 2018թ. հունվարի 1-ը՝ վաճառքի համար մատչելի ակտիվների համար): Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով, բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ՝ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որոնք ենթադրություններն ու գնահատումներն էական ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- COVID-19-ի հետ կապված զիջումներ կապված վարձակալության գծով 2021թ. Հունիսի 30-ից հետո ընկած ժամանակաշրջանների համար (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)
- «Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- «Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)

- «Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):
- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:
Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:
Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումների կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր

նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	- 3 տարի
Սարքավորումներ և մեքենաներ	- 8 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 8 տարի
Տնտեսական գույք	- 8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է պայմանագրորեն ամրագրված ժամանակաշրջան, իսկ դրա բացակայության դեպքում օգտակար ծառայության գնահատված ժամկետ, որը, սակայն, չի գերազանցում 10 տարին արտոնագրերի և լիցենզիաների համար:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է ուպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթ նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալալական պայմանագրեր գրասենյակային և այլ տարածքների համար:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայամանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով

պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները): Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Գրասենյակ	- 3 տարի
Խաղային կենտրոններ	- 3 – 5 տարի :

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում: Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար,կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդա սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը և ներառում է պաշարերի ձեռքբերման, ինչպես նաև դրանք ներկայիս վիճակի գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգում և չափում – անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային

ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմաններին, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը

կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի զեղչով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այդ ճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ընկերությունը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև

հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:
Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է բաժնետոմսերի նոմինալ արժեքը:
Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:
Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլվում է դամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:
Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ:
Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:
Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:
Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի

3.12 Հասույթի ճանաչում

Պայմանագրերից հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5 քայլի գործընթացով:

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրային զեղչերի և զիջումների գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:
Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման, ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը կրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:
Հասույթը հիմնականում առաջանում՝

- Ծրագրային ապահովման մշակման և խորհրդատվական
- Բուքմեյքերական խաղադրույքներից և խաղերից:

Հասույթ ծրագրային մշակման և խորհրդատվական ծառայություններից
Ընկերությունը ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում ստանում է ծառայությունների վճար, որը ամսական կազմում է 2,000,000 եվրո:
Հասույթը ճանաչվում է յուրաքանչյուր ամսվա համար ներկայացված հաշիվ ապրանքագրերի հիման վրա:

Բուքմեյքերական խաղադրույքներից և խաղերից հասույթ

Հաճախորդների խաղադրույքներից գոյացող հասույթը ներառում է սպորտային խաղադրույքները, ֆիքսված հավանականություններով խաղադրույքները, առցանց խաղերը և կազինոն: Ընկերության խաղադրույքները և խաղերի գործունեությունը դասակարգվում է որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ:
Առցանց շահումով խաղերից և սպորտային խաղադրույքներից հասույթը ներառում է խաղի մասնակիցներից գանձվող գումարների և մասնակիցների շահած գումարների տարբերությունը: Խաղային հասույթը հաշվառվում է հաճախորդների կողմից կրած զուտ պարտության գումարով, ինչը հաշվարկվում է որպես կատարված խաղադրույքներ՝ հանած հաճախորդների շահած գումարը՝ գումարած ժամանակաշրջանի վերջում բաց դիրքերի վերագնահատումից ստացված շահույթը կամ վնասը: Այս ածանցյալները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ իրական արժեքով՝ շահույթի կա վնասի միջոցով և ներառվում են հասույթի տողում, քանի որ դա հանդիսանում է Ընկերության հիմնական գործունեության ճյուղերից մեկը:
Հաճախորդների խրախուսման գումարները և պարգևատրումները (ներառյալ անվճար խաղադրույքները) նվազեցվում են խաղային հասույթից:
Խաղադրույքի գումարները որպես հասույթ ճանաչվում են խաղի եզրափակման պահին: Կատարված, բայց չփակված խաղադրույքները չեն ներառվում հասույթում և հետաձգվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ածանցյալ ֆինանսական գործիքներում, մինչև որ եզրափակվում է դրանց վերաբերող այն իրադարձությունը, որի ժամանակ դրանք փակվում են համապատասխան՝ հաճախորդների շահումների դիմաց վճարների հետ:

4 Հիմնական միջոցներ

(հազար դրամ)

	Համակարգչային սարքավորումներ	Սարքավորումներ և մեքենաներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**602,481**	**25,207**	-	**16,680**	-	**644,368**
Ավելացումներ	445,097	92,624	-	39,910	-	577,631
Օտարում	(375)	-	-	-	-	(375)
Մաշվածության փակում	(674,843)	(13,269)	-	(15,004)	-	(703,116)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**372,360**	**104,562**	-	**41,586**	-	**518,508**
Ավելացումներ	764,608	112,825	165,249	254,816	638	1,298,136
Օտարում/Դուրսգրում	(1,622)	-	-	-	-	(1,622)
Վերադասակարգում	-	(7,751)	-	7,751	-	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,135,346**	**209,636**	**165,249**	**304,153**	**638**	**1,815,022**
Մաշվածություն						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**364,145**	**15,169**	-	**10,470**	-	389,784
Տարեկան մաշվածություն	331,311	16,358	-	4,799	-	352,468
Մաշվածության փակում	(674,843)	(13,269)	-	(15,004)	-	(703,116)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**20,613**	**18,258**	-	**265**	-	**39,136**
Տարեկան մաշվածություն	256,538	33,217	1,480	20,643	13	311,891
Օտարում/Դուրսգրում	(155)	-	-	-	-	(155)
Վերադասակարգում		(4,360)		4,360		
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	276,996	47,115	1,480	25,268	13	350,872
Զուտ հաշվեկշռային արժեք						
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	351,747	86,304	-	41,321	-	479,372
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	858,350	162,521	163,769	278,885	625	1,464,150

5 Ոչ նյութական ակտիվներ

(հազար դրամ)

	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Ակտիվի սկզբնական արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,346	-	17,346
Ավելացում	86,206	30,000	116,206
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	103,552	30,000	133,552
Ամորտիզացիա			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	382	-	382
Հաշվարկված ամորտիզացիա	21,363	383	21,746
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,745	383	22,128
Զուտ հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,964	-	16,964
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	81,807	29,617	111,424

6 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

(հազար դրամ)

	Գրասենյակ	Խաղային կենտրոններ	Ընդամենը
Սկզբնականարժեք			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Ավելացումներ	163,038	171,050	334,088
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	163,038	171,050	334,088
Ավելացում	996,652	203,822	1,200,474
Օտարումներ/Դուրսգրումներ	-	(18,365)	(18,365)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,159,690	356,507	1,516,197
Մաշվածություն			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Տարեկան մաշվածություն	4,407	4,623	9,030
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,407	4,623	9,030
Տարեկան մաշվածություն	386,563	87,934	474,497
Օտարումներ/Դուրսգրումներ	-	(5,333)	(5,333)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	390,970	87,224	478,194
Զուտ հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**158,631**	**166,427**	**325,058**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**768,720**	**269,283**	**1,038,003**

7 Հետաձգված հարկային ակտիվներ

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	147,827	70,128
Ֆինանսական արդյունքներում ճանաչված փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 18)	114,187	77,699
Տարեվերջի մնացորդ	262,014	147,827

2021թ. հետաձգված հարկի գծով կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%):

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ.

(հազար դրամ)

	2020	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2021
Արձակուրդայինի պահուստ	147,827	158,227	306,054
Այլ դեբիտորական պարտքեր	-	5,171	5,171
Վարձակալության գծով ընթացիկ պարտավորություններ	-	209,034	209,034
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	147,827	372,432	520,259
Հիմնական միջոցներ	-	(71,404)	(71,404)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	(186,841)	(186,841)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	-	(258,245)	(258,245)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	147,827	114,187	262,014

(հազար դրամ)

	2019	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2020
Արձակուրդայինի պահուստ	70,128	77,699	147,827
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	70,128	77,699	147,827
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	70,128	77,699	147,827

8 Պաշարներ

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Պահեստամասեր	122	89
Շինանյութեր	3,083	675
Արագամաշ առարկաներ	105,636	51,370
Ապրանքներ	88,464	27,177
	197,305	79,311

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևատրային դեբիտորական պարտքեր	1,183,413	1,563,016
Միջնորդներից ստանալիք գումարներ	3,629,035	2,316,422
	4,812,448	3,879,438
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճարված արտոնագրային վճարներ	981,667	981,667
Տրված կանխավճարներ	604,327	454,682
Կանխավճարներ հարկերի գծով	398,466	266,540
Այլ դեբիտորական պարտքեր	96,397	-
	2,080,857	1,702,889
Արժեզրկման պահուստ	(28,726)	-
	6,864,579	5,582,327

Ընկերության ծառայությունների միակ գնորդը «Սոֆթ Կոնսթրաքթ Լիմիթիդ» ՍՊԸ-ն է (կապակցված կողմ): Ծառայությունների մատուցումից դեբիտորական պարտքերը ենթակա են վճարման ըստ պայմանագրի 1 ամսյա ժամկետում:

Միջնորդներից ստանալիք գումարները ներառում են վճարահաշվարկային կազմակերպությունների («Իզի Փեյ» ՍՊԸ, «Թել-Սել» ՓԲԸ, «Իդրամ» ՍՊԸ և այլ) և բանկերի հետ կնքած պայմանագրերի շրջանակներում Ընկերության օգտին հավաքագրված գումարները: Հավաքագրված գումարների դիմաց գանձվող կոմիսիոն վճարները ներառված են շահույթում կամ վնասում «միջնորդավճարներ»-ում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 1 ամիս (2020թ.՝ 1 ամիս): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսները չեն հաշվարկվում: 20 ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի վերլուծության և առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների վերաբերյալ բացահայտումները :

10 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

	2021թ.	2020թ.
		(հազար դրամ)
Կանխիկ միջոցներ	214,683	125,698
Բանկային հաշիվներ	525,103	158,942
	739,786	**284,640**

11 Բաժնետիրական կապիտալ

Ընկերության բաժնետիրական կապիտալը բաշխված է հետևյալ բաժնետերերի միջև միջև.

	2021թ.
Վահե Բաղալյան	50%
Վիգեն Բաղալյան	50%

12 Վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալել է տարածքներ և շինություններ, ներառյալ հիմնական գրասենյակային շենքը: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընկերությանը արգելված է հիմքում ընկած ակտիվը վաճառել կամ գրավադրել: Վարձակալված շենքերը և տարածքները Ընկերությունը պետք է պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության վերջում գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ապագա նվազագույն վարձավճարները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

Նվազագույն վարձավճարներ

	2021թ.	2020թ.
		(հազար դրամ)
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	637,332	138,523
Ֆինանսական ծախս	(111,935)	(33,823)
	525,397	**104,700**
Երկրորդից հինգերորդ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	682,970	268,341
Ֆինանսական ծախս	(47,068)	(34,261)
	635,902	**234,080**
Զուտ ներկա արժեք	**1,161,299**	**338,780**

Վարձակալության գծով պարտավորությունները զեղչելու համար Ընկերության կողմից կիրառված փոխառության միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 12.6%:

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տոկոսային ծախսը, որը հաշվեգրվել է վարձակալության գծով պարտավորություններին կազմել է 158,852 (2020թ՝ 5,531 հազար դրամ) և ներառվել է «Ֆինանսական ծախսերում»:

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Հաճախորդների մնացորդներ	636,247	1,353,376
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	2,553,006	1,229,831
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,467,079	325,062
Ստացված կանխավճարներ	10,148	-
Վճարվելիք հարկեր և պարտադիր վճարներ	593,421	349,286
	5,259,901	3,257,555

Հաճախորդների մնացորդներն իրենցից ներկայացնում են խաղերի մասնակիցների կողմից vivarobet.am կայքէջում խաղային համալրումները:
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 1 ամիս (2020թ.՝ 1 ամիս):
Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:
Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 20-ում:

14 Ծրագրային ապահովման մշակման պայմանագրերից հասույթ

Ընկերության ծառայությունների միակ գնորդը՝ «Սոֆթ Կոնսթրաքթ Լիմիթիդ» ՍՊԸ-ն է (կապակցված կողմ): Համաձայն կնքված պայմանագրի՝ Ընկերությունը ստանում է ծառայությունների վճար, որը ամսական կազմում է 2,000,000 եվրո:

15 Խաղային եկամուտներ

(հազար դրամ)

2021թ.	Համախառն խաղային եկամուտ	Կատարված խաղադրույքներ	Շահած գումարներ	Համախառն խաղային եկամտի մարժա
Կազինո	23,159,670	1,424,644,270	(1,401,484,600)	1.6%
Սպորտային խաղադրույքներ	8,024,090	154,208,298	(146,184,208)	5.2%
	31,183,760	1,578,852,568	(1,547,668,808)	

(հազար դրամ)

2020թ.	Համախառն խաղային եկամուտ	Կատարված խաղադրույքներ	Շահած գումարներ	Համախառն խաղային եկամտի մարժա
Կազինո	3,616,445	230,069,342	(226,452,897)	1.6%
Սպորտային խաղադրույքներ	1,098,287	15,337,387	(14,239,100)	7.2%
	4,714,732	245,406,729	(240,691,997)	

Խաղային եկամուտներն իրենցից ներկայացնում են խաղադրույքներից ստացված զուտ գումարները, որոնք հաշվարկվում են որպես կատարված խաղադրույքների և հաճախորդների շահած գումարների տարբերություն: Հասույթի ձևավորման և ճանաչման քաղաքականությունը մանրամասն ներկայացված է ծանոթագրություն 3.12-ում:
Ընկերությունը հաշվարկում է համախառն խաղային եկամտի մարժան՝ գնահատելու համար գործունեության տվյալ ճյուղի արդյունավետությունը: Այն հաշվարկվում է որպես համախառն խաղային եկամտի հարաբերություն ընդամենը կատարած խաղադրույքների նկատմամբ:

16 Այլ ծախսեր

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	493,424	86,945
Մասնագիտական ծառայություններ	811,983	50,880
Գործուղման ծախսեր	266,286	7,124
Հարթակի օգտագործման իրավունքի ծախսեր	129,624	47,048
Բանկային և ապահովագրության ծախսեր	175,200	62,302
Փոստային ծառայություններ	85,333	21,868
Դեբիտորական պարտքերի արժեզրկում	28,726	-
Այլ	315,237	87,736
	2,305,813	**363,903**

17 Ֆինանսական ծախս, զուտ

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Վարձակալության գծով ծախսեր	158,852	5,531
Տոկոսային եկամուտ	(8,862)	-
	149,990	**5,531**

18 Շահութահարկի գծով ծախս

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Ընթացիկ հարկ	1,414,158	346,632
Հետաձգված հարկ (տես՝ Ծանոթագրություն 7)	(114,187)	(77,699)
	1,299,971	**268,933**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

(հազար դրամ)

(հազար դրամ)	2021 31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ դրույքաչափ (%)	2020 31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	6,869,899		2,784,915	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	1,236,582	18%	501,285	18%
Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ), զուտ	63,389	0.9%	(232,352)	(8.34%)
Շահութահարկի գծով ծախս	**1,299,971**	**18.9%**	**268,933**	**9.66%**

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է ղեկավարության՝ վարձակալության ժամկետների գնահատականներից, ինչպես նաև լրացուցիչ փոխառության դրույքից, որն օգտագործվել է վարձակալության գծով վճարները զեղչելու համար: Այս վարձակալության ժամկետները համապատասխանում են պայմանագրի այն ժամանակաշրջանին, որը հնարավոր չէ չեղարկել, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը խելամտորեն վստահ է երկարացման տարբերակների օգտագործման մեջ: Վարձակալության ժամկետը գնահատելիս՝ ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր այն փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում Ընկերության համար վարձակալությունը երկարացնելու տարբերակ կիրառելու նպատակով, ինչպիսիք են օրինակ՝ վարձակալության պայմանագիրը դադարեցնելու կամ նորը կնքելու ծախսերը:
Այս գործոններում փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ գնահատված վարձակալության ժամկետների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների գրանցված արժեքի վրա:

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	(հազար դրամ)	
	2021թ.	2020թ.

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,812,448	3,879,438
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	739,786	284,640
	5,552,234	4,164,078

Ֆինանսական պարտավորություններ

		(հազար դրամ)
	2021թ.	2020թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	-	40,000
Վարձակալության գծով պարտավորություններ	1,161,299	338,780
Առևտրայի և այլ կրեդիտորական պարտքեր	4,666,480	2,908,269
	5,827,779	3,287,049
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրականարժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	17,817	16,088
	5,845,596	3,303,137

21 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է հիմնականում գործառնական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթակվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործիքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսաթվի փոխարժեքով

2021

Հազար դրամ

	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		

Տրամադրված փոխառություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	43,981	1,188,512
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,915	295,243
	50,896	1,483,755
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	815	116,013
	815	116,013
Զուտ ենթարկվածություն	**50,081**	**1,367,742**

2020

Հազար դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	1,476,211
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	2,171
	-	1,478,382
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	-	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	32,882
	-	32,882
Զուտ ենթարկվածություն	-	**1,445,500**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ԱՄՆ-ի դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 15%) աճին/նվազմանը: 15%-ը (2020թ.՝ 15%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով 10%-ով (2020թ.՝ 15%):

Դրամի արժեզրկումը ԱՄՆ-ի դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2020թ՝. 15%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Շահույթ կամ վնաս	(5,008)	-	(136,774)	(216,825)

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Շահույթ կամ վնաս	5,008	-	136,774	216,825

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

(հազար դրամ)

	2021թ.	2020թ.
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Առևտրային և դեբիտորական պարտքեր	1,183,413	1,563,016
Վճարահաշվարկային միջոցներից ստանալիք գումարներ	3,629,035	2,316,422
Մնացորդներ բանկերում	525,103	158,942
	5,337,551	**4,038,380**

Պարտքայն ռիսկը կառավարվում է խմբային հիմունքներով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:
Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքայի ռիսկը կառավարվում է գումարները տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:
Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով առկա է նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում: Ընկերությունն ունի մեկ հիմնական դեբիտոր, որը հանդիսանում է Ընկերության կապակցված կողմ: Տարեվերջի մնացորդն իրենից ներկայացնում է մեկ ամսվա պարտավորություն: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այս դեբիտորական պարտքն ամբողջությամբ հավաքագրելի է, քանի որ նախկինու երբևէ վճարման ուշացումներ չեն եղել, այդուհանդերձ ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստը կլինի աննշան:
Վճարահաշվարկային միջնորդներից պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ գործընկերները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններ են:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:
Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վար՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները:
Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2021

(հազար դրամ)	Անտոկոս	Պարտավորություններ վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		12.65%	
Մինչև 6 ամիս	4,666,480	318,666	4,985,146
6 ամսից մինչև 1 տարի	-	318,666	318,666
1-5 տարի	-	682,970	682,970
	4,666,480	**1,320,302**	**5,986,782**

2020

(հազար դրամ)	Անտոկոս	Պարտավորություններ վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		12.50%	

Մինչև 6 ամիս	2,908,269	69,262	2,977,531
6 ամսից մինչև 1 տարի	40,000	69,262	109,262
1-5 տարի	-	268,341	268,341
	2,948,269	**406,865**	**3,355,134**

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

Ընկերությունն ունի նաև վարկային միջոցների հասանելիություն բանկի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ 6,000,000 հազար դրամի սահմաններում: Պայմանագիրը ուժի մեջ է մինչև 2039թ. հունվարի 23-ը: Գործում են նաև Ընկերության սեփականատերերի հետ կնքված փոխառությունների անժամկետ, անտոկոս պայմանագրեր՝ ընդհանուր 3,000,000 հազար դրամ գումարի սահմաններում:

22 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի տվյալներ):

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը Ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում: Իրական արժեքը որոշվում է՝ համապատասխան դրամական հոսքերը զեղչված նմանատիպ գործիքների համար կիրառվող շուկայական տոկոսադրույքով: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Վերը նշված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սպորտային խաղադրույքների բաց դիրքեր: Բաց սպորտային խաղադրույքների իրական արժեքը տարեվերջին հաշվարկվել է՝ օգտագործելով համապատասխան սպորտային իրադարձությունների վերջին մատչելի գները:

23 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և մասնակիցներին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով

տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել մասնակիցներին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը մասնակիցներին, թողարկել նոր բաժնեմասեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար

24 Պարտավորվածություններ

Երաշխավորությունների գծով պարտավորվածություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը երաշխավորել է կապակցված կողմի վարկային պարտավորությունները 3,291,580 հազար դրամի չափով: Ի լրումն Ընկերությունը երաշխավորել է մեկ այլ կապակցված կողմի՝ կնքվելիք պայմանագրի կատարման ապահովումը՝ 1,858 հազար եվրոյի չափով:

25 Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:
Բոլոր այս գործոնները կարող են բացասաբար ազդել Ընկերության ապագա ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Ընկերության կայունությունն ապահովելու նպատակով:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չուի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն:
Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ Հարկային օրենսգրքի տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին վերաբերող գլուխը, որը սահմանում է առանձնահատկություններ՝ փոխկապակցված կողմերի միջև կատարվող գործարքների վերաբերյալ, սահմանում է հարկային մարմնի կողմից գործարքները վերահսկվող համարելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ ծանուցում և փաստաթղթավորում ներկայացնելու կարգը: Նշված կարգավորումների նպատակն է պարզել, թե արդյոք փոխկապակցված կողմերի միջև գործարքների ֆինանսական ցուցանիշները համապատասխանում են պարզած ձեռքերի հեռավորության սկզբունքին, ինչպես նաև չհամապատասխանելու դեպքում՝ սահմանվում է դրանց ճշգրտման կարգը: Նշված կարգավորումների կիրառությունը ենթակա է հարկային մարմնի կողմից առանձին ստուգման և պահանջված փաստաթղթավորման բացակայությունը կամ ոչ պատշաճ ներկայացնելը կարող է հանգեցնել էական հետևանքների:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Հազար ՀՀ դրամ	Փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություն	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	80,000	-	80,000
Դրամային հոսքերից			
Մուտքեր	2,780,000	-	2,780,000
Մարումներ	(2,820,000)	(41,931)	(2,861,931)
Ոչ դրամային հոսքերից			
Վարձակալական պարտավորությունների սկզբնական ճանաչում	-	324,308	324,308
Տոկոսի հաշվեգրում	-	5,531	5,531
Հաշվեգրված վարձակալական ծախսեր	-	50,872	50,872
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	40,000	338,780	378,780
Դրամային հոսքերից			
Մուտքեր	1,800,000	-	1,800,000
Մարումներ	(1,840,000)	(588,718)	(2,428,718)
Ոչ դրամային հոսքերից			
Վարձակալական պարտավորությունների ավելացում	-	1,200,474	1,200,474
Տոկոսի հաշվեգրում	-	158,852	158,852
Հաշվեգրված վարձակալական ծախսեր	-	51,911	51,911
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,161,299	1,161,299

27 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության սեփականատերերին, հիմնական ղեկավար անձնակազմին և ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններին:

27.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է բաժնետերեր՝ Վահե Բաղալյանի և Վիգեն Բաղալյանի կողմից յուրաքանչյուրն իր 50% բաժնեմասով:

27.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել է հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Գործարքներ	2021թ.	(հազար դրամ) 2020թ.
Բաժնետերեր		
Փոխառությունների ստացում	1,800,000	2,780,000
Վարձակալական ծախսեր	-	1,400
Շահաբաժինների վճարում	5,782,383	-
Բաժնետիրական կապիտալի համալրում	289,119	-
Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	12,963,080	9,218,891
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	640,489	93,925
Փաստացի վճարված վարձավճարներ	438,696	8,422
Փոխառության տրամադրում	300,000	400,000
Տոկոսային եկամտի հաշվեգրում	-	515
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Փոխառությունների մարում		
Աշխատավարձ և պարգևատրումներ	119,275	15,630

Մնացորդներ	2021թ.	(հազար դրամ) 2020թ.
Բաժնետերեր		
Փոխառություններ	-	40,000
Վարձակալության գծով ընթացիկ պարտավորություններ	-	1,400
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Կրեդիտորական պարտք աշխատակիցներին	6,157	184
Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,183,362	1,563,016
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	461,307	66